ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱՆ

Բոլոր նշանները ցույց են տալիս, որ մեր մայրաքաղաքի քաղաքապետարանը և վերադաս մարմինները հերթական անգամ անդրադառնում են Երևանի «Հյուսիսային պողոտայի» հարցին, փորձելով իրականացնել այն ու դրանով իսկ ավարտին հասցնել քաղաքի կենտրոնի բարեկարգումը:

Հայտնի է, որ մի քանի տասնամյակ առաջ, թերևս վերադասի կարգադրությամբ, «Հյուսիսային պողոտան», որպես այդպիսին մերժվելով դուրս էր թողնվել քաղաքի գլխավոր հատակագծից և կենտրոնի հատակագծում այն չկար: Այն ժամանակվա քաղաքի գլխավոր ճարտարապետ Մարկ Գրիգորյանը շատ կարևորում էր իր դերը այն առումով, որ կարողանում է չիրականացնել որևէ կառուցապատում, ինչը կարող էր խանգարած լինել այդ պողոտայի ստեղծմանը առավել բարենպաստ պայմաններ առաջանալու դեպքում: Խոսք չի կարող լինել, որ Հյուսիսային պողոտան, լինելով քաղաքի գլխավոր «հյուսիս-հարավ» առանցքի մի օրգանական և շատ կարևոր մասը, պետք է իրականացվի, հակառակ դեպքում բոլորովին անհասկանալի և անիմաստ կլինի քաղաքի կենտրոնի արդեն իրականացրած որոշ մասը, ասենք Օպերայի և բալետի ու Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճի միասնական շենքի ներկա տեղում գտնվելը և նման դիրք ունենալը:

«Քաղաքի գլխավոր պողոտա» կամ «Հյուսիսային պողոտա» անվանումները որոշ իմաստով պայմանական անվանումներ են. չէ՞ որ դրանք գործնականում «պողոտաներ» չեն, սրանցում «պողոտային» յուրահատուկ մեծ չափերի երթևեկելի մասեր չկան: Այնպես որ Մանկական հանրախանութի մոտից մինչև Ազատության հրապարակ ձգվող մասում նույնպես կարող է երթևեկելի մաս չլինել, այլ միայն հետիոտն՝ մասսայական և մասնավոր շարժման բնույթ կունենա, ստեղծված ծառուղիների կոմպլեքս բնույթ: «Հյուսիսային պողոտա» ասելով, նաև չի նշանակում, որ նրա երկու կողմերում բարձրանալու են փոքր կամ մեծ չափի շինություններ: Ասենք, որ անցյալում Երևաննախագծի և Հայպետնախագծի ներկայացրած նախագծերում կային տարբերակներ, որոնցում պողոտան ստեղծվում էր բազմահարկ շենքերով, իսկ ողջ պողոտայի ներքնահարկը տրամադրվում էր հարյուրավոր մեքենաների, որպես կայանատեղ:

Այդ նույն ժամանակներում կային նաև առաջարկներ, որոնցում իսպառ բացառվում էր քաղաքի բուն կենտրոնում որևէ մեծ կառուցապատում, առաջարկվում էր ամբողջ տարածությունը Թումանյան փողոցից մինչև Սպանդարյան փողոց ծառապատել, կանաչազարդել հանուն քաղաքի այդ կենտրոնի միկրոկլիմայի առողջացման: Այդ առաջարկները նաև արձագանքներ ունեցան, որոնք մամուլում տպագրվեցին աշխատավորական կոլեկտիվների անունով: Հյուսիսային պողոտայի տարածքում կարող են տեղավորվել 3-4 շենքեր, որոնք խնդիրներ չեն լուծի, մինչ ծառապատումը մեր քաղաքի կենտրոնը կփրկի օդի աղտոտվածությունից: Այն կդառնա մանուկների և, ընդհանրապես «օդ շնչելու» վայր: Մանավանդ, որ վերջնականապես իր նախկին նշանակությունը կորցրեց Ֆիլհարմոնիայի հյուսիսակողմի մեծ ծառաստան-այգին, որ նախագծվել էր դեռևս Ալեքսանդր Թամանյանի նախագծում: Այժմ այն դարձել է պողոտաների խաչմերուկ, շարժվող տրանսպորտի զանգվածների խառնարան:

«Հյուսիսային պողոտայի» հարցի շուրջը քառորդ դար առաջ տեղ գտած բուռն քննարկումները կոնկրետ գործ չդարձան, սակայն իրենց դասերն ունեցան, որոնք այսօր էլ չպիտի մոռացվեն և գործը պիտի շարունակվի և ոչ սկսվի զրոյից:

Էկոլոգիայի հարցը ողջ աշխարհում գնալով ավելի մեծ տեղ է գրավում քաղաքաշինարարների ուշադրության մեջ և պետք է, որ մեր քաղաքաշինարարները այդ կարևոր հարցը հիմա էլ աչքի առաջ ունենան ու քաղաքի կենտրոնը բեռնաթափեն և ոչ նոր կուտակումների վայր դարձնեն:

Հիշենք, որ «Հյուսիսային պողոտայի» գործը ժամանակին կասեցվեց նաև հուշարձանների պահպանության մարմինների պահանջով, որ իբր նոր պողոտան կոչնչացնի դրանք: Իհարկե, շենքերով կառուցապատելու դեպքում այնտեղ ոչինչ պաշտպանվել չի կարող, մինչ ողջ տարածքը ծառապատելու դեպքում կարևոր հուշարձանները կպահպանեն իրենց գոյությունը բարեկարգ շրջապատում:

Պետք է նկատել, որ քաղաքի գլխավոր ճարտարապետներից ամեն մեկն իր դերն ունեցավ և այս հանգույցի ոլորտում ուղղակի հանցավոր ձևով թույլատրեցին կառուցել շինություններ, որոնք այս կամ այն չափով դժվարացնում են ճարտարապետական համապատասխան լուծում տալու, տվյալ տարածքը բարեկարգելու համար:

Հոդվածիս առընթեր ներկայացվում է գծանկար, որ իր ժամանակին արված առաջարկներից էր: Այստեղ ողջ ազատ տարածքը հատկացված է ծառապատման: Իր ժամանակին ասվում էր, որ պետք չէ ժամանակ կորցնել, պետք է ծառապատումը սկսել: Եթե այդպես արվեր, մենք հիմա Երևանի կենտրոնում կունենայինք 25-ամյա պուրակ, մի բան, որ կուզենային իրենց մայրաքաղաքների կենտրոնում ունենալ շատ երկրներ:

Ճարտարապետներից շատերն են ուզում քաղաքի կենտրոնում կառուցել գեղեցիկ շենքեր: Պետք չէ գայթակղվել այդ եսասիրությամբ. զգույշ լինենք և «Հյուսիսային պողոտան» ստեղծենք այնպես, որ այն բարիք լինի և ոչ չարիք:

Տիրան Մարության
ՀՀ վաստակավոր շինարար,
Ճարտարապետության դոկտոր

25 հունվարի 1999 թ.

***Գծ. 1-2** – Հյուսիսային պողոտայի տարբերակներ (հեղինակ՝ Տ. Մարության)*



Գծ. 3 *– Հյուսիսային պողոտայի տարբերակ (հեղինակ՝ Տ. Մարության)*